

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

18 մայիսի 2010 թ.

N 393-Ն

#### Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

#### Հրամայում եմ՝

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Ն. Հովհաննիսյանին և իրավաբանական վարչության պետ Մ. Գրիգորյանին՝ փաստաթուղթը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

**ՀՀ կրթության և գիտության  
նախարար՝**

**Ա. Աշոտյան**

Կ Ա Ր Գ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵԿՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ  
(ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ  
ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու հավակնություն ունեցող անձանց վերապատրաստում (այսուհետ՝ Վերապատրաստում) կազմակերպելու և իրականացնելու հետ կապված փոխհարաբերությունները:

2. Հավաստագրման քննությանը մասնակցելու համար կարող է Վերապատրաստվել «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին բավարարող անձը:

3. Վերապատրաստումը կազմակերպվում է տարեկան երկու անգամ՝ կրթության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Նախարարություն) սահմանած ժամանակացույցին համապատասխան: Անորոշ ժամկետով պայմանագրի հիման վրա պաշտոնավարող տնօրենների Վերապատրաստման ժամանակացույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Վերապատրաստման հարցաշարը հաստատում է Նախարարը:

5. Վերապատրաստող կազմակերպություններն ընտրվում և երաշխավորվում են Նախարարության կողմից, սույն կարգով՝ սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում:

6. Վերապատրաստող կազմակերպությունների ընտրության մասին Նախարարության հայտարարությունը պաշտոնապես հրապարակվում է ընտրության անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ընտրությանը մասնակցելու հայտը Նախարարություն է ներկայացվում ընտրության անցկացման օրվանից առնվազն 2 օր առաջ:

**(6-րդ կետը փոփ. 27.12.16 N 1348-Ն)**

7. Վերապատրաստող կազմակերպության ընտրության մասին հայտարարության տեքստում նշվում է.

1) վերապատրաստող կազմակերպությանը ներկայացվող պահանջները.

2) հայտերի ընդունման վայրը, օրերը, ժամերը և վերջնաժամկետը:

8. Վերապատրաստող կազմակերպության ընտրությանը կարող են մասնակցել Նախարարության կողմից սահմանած և պաշտոնապես հրապարակած պայմաններին և չափանիշներին բավարարող կազմակերպությունները: Այդ պայմաններն են՝

1) ուսումնական տարածքը և վերապատրաստող համապատասխան մասնագետները,

2) հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի նկարագրով, ինչպես նաև «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ

հողվածի 7-րդ մասով սահմանված վերապատրաստման բովանդակության պարտադիր բաղադրիչներին համապատասխան վերապատրաստող կազմակերպության կողմից մշակված ծրագիրը (Նախարարի կողմից հաստատված հարցաշարին համապատասխան) դասավանդման թեմատիկ պլանավորումը, վերապատրաստման տևողությունը,

3) ուսումնամեթոդական գրականություն, ձեռնարկներ, նյութատեխնիկական բազայի առկայությունը:

9. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված ընտրությունը կազմակերպվում է տարեկան երկու անգամ՝ վերապատրաստման առաջին դասընթացից առնվազն մեկ ամիս առաջ:

10. Վերապատրաստող կազմակերպության ընտրությունը իրականացվում է Նախարարի կողմից ձևավորված հանձնաժողովի միջոցով՝ հայտատուների ներկայությամբ: Հանձնաժողովի անդամ չի կարող լինել Վերապատրաստող կազմակերպության հայտ ներկայացրած կազմակերպության ներկայացուցիչը:

11. Նախարարությունը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ընտրության արդյունքները հրապարակում է ընտրության անցկացմանը հաջորդող 3-օրյա ժամկետում:

12. Հաղթող ճանաչված և Նախարարության կողմից երաշխավորված Վերապատրաստող կազմակերպությունը (ները) վերապատրաստում կազմակերպելու մասին հայտարարությունը հրապարակում է (են) Հավաստագրման քննություններից առնվազն մեկ ամիս առաջ՝ Նախարարության պաշտոնական կայքում և առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

13. Վերապատրաստվող անձը (այսուհետ՝ անձը) ազատ է վերապատրաստող կազմակերպության ընտրության հարցում՝ Նախարարության կողմից երաշխավորված (մրցույթում հաղթող ճանաչված) կազմակերպությունների ցանկից:

14. Վերապատրաստման դասընթացին մասնակցելու դիմումները վերապատրաստող կազմակերպությանն են ներկայացվում հայտարարության հրապարակմանը հաջորդող 15-օրյա ժամկետում: Վերապատրաստման դասընթացը սկսվում է դիմումների ընդունման վերջնաժամկետին հաջորդող 4-օրյա ժամկետում, սակայն 2 օրից ոչ շուտ:

**(14-րդ կետը փոփ. 27.12.16 N 1348-Ն)**

15. Վերապատրաստում կազմակերպելու մասին հայտարարության տեքստում նշվում է.

- 1) վերապատրաստվելու հավակնություն ունեցող անձին ներկայացվող պահանջները,
- 2) վերապատրաստման համար դիմումի ձևը (Ձև-1),
- 3) դիմումների ընդունման վայրը, օրերը, ժամերը և վերջնաժամկետը,
- 4) վերապատրաստման դասընթացի տևողությունը և վայրը,
- 5) վերապատրաստման դասընթացի արժեքը,
- 6) սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը,
- 7) վճարում կատարելու համար նախատեսված բանկային հաշվեհամարը:

16. Վերապատրաստման դասընթացին մասնակցելու իրավունք ունեցող անձը վերապատրաստող կազմակերպությանը ներկայացնում է.

- 1) դիմում՝ վերապատրաստող կազմակերպության ղեկավարի անունով.
- 2) 3x4 չափի մեկ լուսանկար.
- 3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.
- 4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը.
- 5) անձնագրի պատճենը.

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը).

7) վերապատրաստող կազմակերպության հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

17. Սույն կարգի 16-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների հետ միասին: Պատճենների իսկությունը ստուգելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

18. Վերապատրաստման ընթացքում անձը կարող է օգտվել օրենքով սահմանված չվճարվող արձակուրդից՝ կողմերի համաձայնությամբ:

19. Վերապատրաստման դիմած անձը կարող է ստանալ դասընթացի մասնակցության մասին տեղեկանք աշխատանքի վայր ներկայացնելու նպատակով:

20. Վերապատրաստումն անցկացվում է Նախարարության կողմից հաստատված քննությունների համար նախատեսված թեմաների բովանդակության և հարցաշարին համապատասխան:

21. Վերապատրաստման դասընթացի թեմաները գրանցվում են դասամատյանում:

22. Վերապատրաստում անցած անձն ստանում է վերապատրաստող կազմակերպության կողմից վավերացված և հաշվառված վկայական, որն ուժի մեջ է տրման ամսաթվից մեկ տարի ժամկետով: Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձը կարող է մինչև հավաստագրի ժամկետի լրանալը դիմել և անցնել սույն կարգով սահմանված վերապատրաստումը:

23. 22-րդ կետում նշված վկայագրի ձևանմուշը հաստատում է Նախարարը վերապատրաստող կազմակերպության ներկայացմամբ:

24. Վերապատրաստման դասընթացի ընդհանուր ծրագրային ծավալի ուսուցման գործընթացի 1/6-ից ավելի բացակայած անձը չի ստանում համապատասխան վկայագիրը:

25. Սույն կարգի 8-րդ և 20-րդ կետերով սահմանված պայմանների խախտմամբ դասընթացի կազմակերպման դեպքում վերապատրաստվող անձը, հիմնավոր պատճառաբանմամբ, կարող է հրաժարվել դասընթացին մասնակցությունից և ուսուցումը շարունակել սույն կարգի 12-րդ կետով սահմանված կազմակերպություններից մեկում: Այս դեպքում վերապատրաստման համար վճարված գումարը ամբողջությամբ փոխանցվում է նոր ընտրված վերապատրաստող կազմակերպությանը:

26. Վերապատրաստող կազմակերպությունը վերապատրաստման դասընթացի ավարտից հետո 5-օրյա ժամկետում Նախարարություն է ներկայացնում վերապատրաստման վկայագիր ստացած անձանց ցուցակը, անձնական գործերի, վերապատրաստման վկայագրերի բաշխման մատյանի և վերապատրաստման դասամատյանի պատճենները, որոնք պահպանվում են Նախարարությունում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

27. Վերապատրաստման դասընթացի համապատասխանությունը սույն կարգի 8-րդ և 20-րդ կետերի պահանջներին կարող է վիճարկվել դատական կարգով:

## Դիմումի նմուշ

**Ձև-1**

ՀՀ կրթության և գիտության  
նախարարի  
2010 թվականի մայիսի 18-ի  
N 393-Ն հրամանի

Հայաստանի Հանրապետության հանրակրթական  
ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք  
(հավաստագիր) ստանալու նպատակով  
վերապատրաստում իրականացնող  
կազմակերպության ղեկավար

պարոն/տիկին \_\_\_\_\_-ին

\_\_\_\_\_ -ից

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

\_\_\_\_\_

դիմողի հաշվառման վայրը

\_\_\_\_\_

դիմողի հեռախոսահամարը (աշխ., բնակ., բջջ.)

\_\_\_\_\_

անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Ծնված՝ \_\_\_\_\_

օրը, ամիսը, տարին, վայրը

## ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման դասընթացի կազմակերպման մասին հայտարարությանը խնդրում եմ գրանցել ինձ որպես դասընթացի մասնակից

Ø Քաղաքացիությունը

\_\_\_\_\_

(Հայաստանի Հանրապետության, իսկ երկքաղաքացիության դեպքում՝ նշել կարգավիճակի ստացման ժամկետը և երկիրը)

Ø Դատարանի օրինական ուժի մեջ դատավճռի հիման վրա

\_\_\_\_\_

(դատապարտվել եմ, չեմ դատապարտվել)

Ø Սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն

\_\_\_\_\_

(ունեմ, չունեմ)

Ø Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

\_\_\_\_\_

(ճանաչվել եմ, չեմ ճանաչվել)

Ø Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից \_\_\_\_\_

(գրկվել եմ, չեմ գրկվել)

Ø Մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը խոչընդոտող հիվանդությամբ \_\_\_\_\_

(տառապում եմ, չեմ տառապում)

Ø Լեզուների իմացությունը

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(հայերենի և առնվազն մեկ օտար լեզվի տիրապետման մակարդակները)

Ø Համակարգչային գրագիտությունը

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման» կարգով սահմանված փաստաթղթերը:

Նախագգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ \_\_\_\_\_

«\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_\_ թ.

**(հավելվածը փոփ. 27.12.16 N 1348-Ն)**